ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ
Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55
էլ. փոստ inform@finca.am
Հաշվետվություն թիվ 9, 01.11.2018թ.

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":

ստորագրող անձինք՝

Անուշ Պետրոսյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն**		01.11.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Միքայելյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		01.11.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Չադրյան	**Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար**		01.11.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Հրաչյա Թոխմախյան	**Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն**		01.11.2018թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

01 նոյեմբեր 2018թ.

«ՖԻՆՔԱ» "FINCA" 00445174

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի N 25/2018 որոշում՝

- Հաստատել Ծրագրային Ազդագիրը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գրանցումից հետո մեկ տարվա ընթացքում մինչև 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ և մինչև 7,000,000 (յոթ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի թողարկումը արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով), ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալ սահմանել ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ի չափով:
- ՀՀ դրամով թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:
- Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:
- Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Ընկերության Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով: